ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 04

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. Երևան 13.08.2021թ.

Կայացավ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ ԱԱՏՄ) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) արտահերթ նիստը:

Մասնակցում էին.

Ն. Մկրտչյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)
Լ. Նանուշյան	- ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ա. Ասոյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ք. Գրիգորյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Գ. Գրիգորյան	- «Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հիմնադիր
Հ. Պողոսյան	- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահի գլխավոր խորհրդական
Շ. Դանիելյան	- Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար
Վ. Պետրոսյան	- Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր
Հ. Ավագյան	- ԱԱՏՄ ղեկավար
Ռ. Սարգսյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ժ. Սարգսյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետ

Գ. Հովհաննիսյան - ԱԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ

Թ. Հակոբյան - ԱԱՏՄ որակի ապահովման վարչության պետ

Ե. Զադոյան - ԱԱՏՄ ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման և վերլուծությունների վարչության պետ

Ա. Ավետիսյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի զարգացման ծրագրերի վարչության խորհրդատու

Բացակայում էին՝

Կ. Բրուտյան - ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ

Ա. Ավանեսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Օրակարգ.

1. Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ ԱԱՏՄ) կառավարման խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 25-ի N 17-Լ որոշմամբ հաստատված՝ ԱԱՏՄ 2021 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխությունների քննարկում և հավանության արժանացում:

2. ԱԱՏՄ հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու մասին առաջարկի քննարկում:

3. ԱԱՏՄ որակի ապահովման վարչության 2021 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվությունների ներկայացում և քննարկում:

4. ԱԱՏՄ 2021 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների գործունեության կատարողականների գնահատման քննարկում և հաստատում:

Ա. Ասոյանը առաջարկեց նիստի օրակարգը հաստատել և քննարկել, իսկ օրակարգային հարցերը հաստատել հեռավար քվեարկությամբ, որոշ իրավական խնդիրներից խուսափելու նպատակով, քանի որ Խորհրդի որոշ անդամներ գտնվում են արձակուրդում:

Ժ. Սարգսյանը նշեց, որ Խորհրդի պետական հատվածի անդամները, ովքեր գտնվում են արձակուրդում իրավունք չունեն իրենց պարտականությունները իրականացնելու:

Ա. Ասոյանը առաջարկեց նման դեպքում Խորհրդի անդամները իրենց դիրքորոշումները հայտնեն և հետագայում քվեարկությունն անցկացնել հեռավար:

Խորհրդի անդամները առաջարկի վերաբերյալ առարկություններ չհայտնեցին:

1. Քննարկվեց օրակարգի հարցը՝ ԱԱՏՄ կառավարման խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 25-ի N 17-Լ որոշմամբ հաստատված՝ ԱԱՏՄ 2021 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխությունների քննարկում և հավանության արժանացում

Հ. Ավագյանը ներկայացրեց նախահաշվում առաջարկվող փոփոխությունները՝ կապված ԱԱՏՄ-ի բնականոն գործունեությունը ապահովելու (գույքային հագեցվածությունը համալրելու, ավտոմեքենաների համար նախատեսվող վառելիք ձեռք բերելու և համապատասխան վերանորոգումների հետ կապված աշխատանքները կազմակերպելու) հետ:

Վ. Պետրոսյանն առաջարկեց մանրամասներ չներառել ներկայացվող հարցում, քանի որ առկա է գնման գործընթաց, որտեղ բոլոր անհրաժեշտ հարցերը ներառված են: Առաջարկեց Խորհրդի աշխատակարգում կատարել փոփոխություններ, որպեսզի նման հարցերով խորհուրդը քննարկում չիրականացնի:

Ա. Ասոյանը նշեց, որ ընթացիկ հարցերը գույքագրված են և առաջիկայում ընթացակարգերը կվերանայվեն, Խորհրդի որոշումների շրջանակներից նման հարցերը դուրս կլինեն: Միաժամանակ որպես տեղեկատվություն նշեց, որ վերանորոգման հետ կապված հարցը խիստ անհրաժեշտություն է, մասնավորապես սանհանգույցների հետ կապված, հաշվի առնելով այն, որ ԱԱՏՄ-ն հանդիսանում է սանիտարահամաճարակային անվտանգության ոլորտի վերահսկողություն իրականացնող մարմին և պարտավոր է առաջինը ձեռնարկել միջոցներ սահմանված պահանջները պահպանելու ուղղությամբ:

Ն. Մկրտչյանը համաձայնեց, նշեց, որ դա ուղղված է արժանապատիվ աշխատանքային միջավայր ապահովելուն և դրա մասին նաև խոսվել է ՀՀ կառավարության նիստում ՀՀ վարչապետի կողմից՝ կարևորելով այդ հարցը յուրաքանչյուր պետական մարմնում:

Խորհրդի անդամները օրակարգի հարցի վերաբերյալ առարկություններ չհայտնեցին:

2. Քննարկվեց օրակարգի հարցը՝ ԱԱՏՄ հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու մասին առաջարկի քննարկում

Հ. Ավագյանը ներկայացրեց ԱԱՏՄ-ում առկա հաստիքներից տարածքային կենտրոններում իրավաբանի հաստիքներ նախատեսելու և ԱԱՏՄ որակի ապահովման վարչության հաստիքի պաշտոնի անձնագրում կրթության պահանջ ավելացնելու անհրաժեշտության հարցը:

Հ. Պողոսյանը նշեց, որ իրավաբանների առկայությունը լրացուցիչ հնարավորություն է ստեղծում առաջացող հարցերին պատշաճ լուծում տալու համար և կարևորեց անհրաժեշտությունը:

Խորհրդի անդամները օրակարգի հարցի վերաբերյալ առարկություններ չհայտնեցին:

3. Քննարկվեցին օրակարգի հարցերը՝ ԱԱՏՄ որակի ապահովման վարչության 2021 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվությունների ներկայացում և քննարկում, ԱԱՏՄ 2021 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների գործունեության կատարողականների գնահատման քննարկում և հաստատում

Թ. Հակոբյանը նշեց, որ ԱԱՏՄ որակի ապահովման վարչության 2021 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվություններում պարունակող տեղեկատվությունը նաև առնչվում է օրակարգի 4-րդ հարցին, ուստի միաժամանակ ներկայացրեց նաև ԱԱՏՄ 2021 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների կատարողականների գնահատման հետ կապված տեղեկատվությունը: Ներկայացրեց 2021 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների որակի ապահովման վարչության հաշվետվությունները՝ կապված իրականացված վարչական վարույթների, ստուգումների, ստուգայցերի, դրանց ընթացքում առաջացած խնդիրների, ստուգումների տարեկան ծրագրի և իրազեկման հետ կապված աշխատանքների մասին: Անդրադարձ կատարվեց նաև ստուգումների արդյունքում կազմվող տեղեկանքների, որոշ դեպքերում ստուգումների գործընթացը կարճելու, ստուգաթերթերի արդյունավետության և դրանցում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության հարցին, ինչպես նաև ստուգումների ցուցանիշներին: Միաժամանակ առաջարկեց ստեղծել աշխատանքային խումբ ստուգաթերթերի արդյունավետությունը քննարկելու համար: Թ. Հակոբյանը տեղեկացրեց նաև, որ խորհրդի անդամ Հ. Պողոսյանի նախաձեռնությամբ համաձայնագիր է ստորագրվել Տեսչական մարմնի և Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության միջև՝ համատեղ աշխատանքային խումբ ստեղծելու և գործատուների համար մի շարք ձեռնարկներ մշակելու և հրապարակելու նպատակով: Առաջին ձեռնարկը՝ «Կարմիր գծեր, որոնք չպետք է հատի գործատուն», որի հեղինակն է Հ. Պողոսյանը, արդեն իսկ տպագրվել է:

Ա. Ասոյանը նշեց, որ ստուգումների ժամանակ հանձնարարագրով նախատեսված համապատասխան ոլորտներում տնտեսավարողի կողմից փաստացի գործունեություն չիրականացնելը և այդ ստուգումների արդյունքում տեղեկանք կազմելը բացասական կանդրադառնա հավաստի վիճակագրության վրա, քանի որ ոլոտներում առկա խնդիրները չեն կարգավորվելու և հետագայում տնտեսավարողները ըստ ռիսկայնության ճիշտ չեն դասակարգվելու:

Ն. Մկրտչյանն առաջարկեց քննարկել ինտերնետային հարթակ ստեղծելու հարցը, որտեղ գործատուները հնարավորություն կունենան մուտք գործել և իրական ժամանակում ծանոթանալ աշխատանքային իրավունքի ոլորտում գործող դրույթներին:

Հ. Պողոսյանը նշեց, որ ԱԱՏՄ-ին 2021 թվականի հուլիսի 1-ից աշխատանքային օրենսդրության պահանման նկատմամբ վերահսկողական գործառույթների վերապահմամբ պայմանավորված, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միությունը փորձում է իրազեկման աշխատանքներով տնտեսավարողներին նախապատրաստել ապագա ստուգումներին և կարևորեց ստուգաթերթերի արդյունավետությունը քննարկելու հարցը:

Խորհրդի անդամները օրակարգի հարցերի վերաբերյալ այլ դիտարկումներ չհայտնեցին:

Հ. Ավագյանը բարձրացրեց բուժաշխատողների կողմից բժշկական փաստաթղթերի լրացման՝ օրենքով վերապահված պարտականության հարցը, մասնավորապես՝ բուժհիմնարկների կողմից բուժաշխատողներին իրավական ակտերով սահմանված փաստաթղթերի չտրամադրելու հետ կապված խնդիրը և առաջարկեց քննարկման առարկա դարձնել:

Լ. Նանուշյանն առաջարկեց ներկայացնել վիճակագրական տվյալներ՝ հարցն ավելի մանրամասն ուսումնասիրելու համար:

Հ. Պողոսյանը լրացուցիչ առաջարկեց քննարկել ԱԱՏՄ-ի ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունում փոփոխություններ կատարելու հարցը: Անդրադարձ կատարեց նաև ստուգումների ստուգաթերթերը վերանայելու հարցին, ինչպես նաև յուրաքանչյուր ստուգաթերթ հաստատման փուլում պարտադիր Խորհրդի հավանությանն արժանացնելու հարցին: Առաջարկեց նաև բյուջեի հետ կապված հարցերը հավանության արժանացնել Խորհրդի նիստերով, որպեսզի անդամներն ավելի մանրամասն տիրապետեն նախատեսվող ծախսերին, ինչպես նաև շեշտը դնել իրազեկման աշխատանքների համար նախատեսվող ծախսերին: Միաժամանակ առաջարկեց վերանայել հեռավար (էլեկտրոնային) քվեարկության ընթացակարգը՝ նվազեցնելով այն:

Ն. Մկրտչյանը նշեց, որ համավարակով պայմանավորված էլեկտրոնային քվեարկություն անցկացնելը արդիական է, սակայն հարցը հետագայում կքննարկվի և համապատասխան ընթացք կտրվի:

Հ. Պողոսյանը տեղեկացրեց, որ Խորհրդի նիստին հարց է բարձրացվել օրենսդրության պահանջների հակասությունները վերացնելու և արդիականացնելու վերաբերյալ և առաջարկել է ստեղծել աշխատանքային խումբ՝ հարցը կարգավորելու նպատակով: Առաջարկեց հարցին հնարավորինս սեղմ ժամկետում ընթացք տալ:

Ն. Մկրտչյանը նշեց, որ բարձրացված հարցը կուսումնասիրվի:

Որոշվեց.

1. Օրակարգի հարցերը հավանության արժանացնել և հաստատել հեռակա քվեարկությամբ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ